

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերջագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

=616=

Պ. ԴՈՐՈՒՆՈՎ

ԲԱՅԼՉԵՎԻԿԻ ՏՂԱՆ



ՊԵՏՐՈՍ 1931 ՅԵՐԵՎԱՆ

13 ՀՅՎ 2017

13

Պ Ա Տ Ա Ն Ե Կ Ա Կ Ա Ն Ս Ե Ր Ի Ա


891.71

Պ. ԳՈՐՈՆՈՎ

ԲԱՅԼՇԵՎԻԿԻ ՏՂԱՆ

Պ Ա Տ Մ Վ Ա Ն Բ

Փարզմ. ԱՐՏ. ՀՈՎՎՅԱՆ



Պ Ե Տ Տ Ղ Ր Ա Տ 1 9 3 1 Յ Ե Ր Ե Վ Ա Ն

Պետերասի տպարան
Հրատարակ. № 1718
Գլավ. № 6561 (ր)
Պատ. № 3593
Տիր. 5.000



11-262539

ԲԱՅՈՒՆՆԵՎԻԿԻ ՏՂԱՆ

Մի ամիս է, ինչ զնացել է Միշիկի հայրը:

Միշիկը նայում է հոր լուսանկարին և հառաչում:

— Մայրիկ, չե՞րք կգա հայրիկը, կարոտիկ եմ նրան:

— Շուտով, Միշիկ ջան, շուտով: Կանցնի ելի մի քիչ ու կվերագառնա մեր հայրիկը:

Միշիկը համբերությամբ սպասում է, — յեթե մայրիկն ասում է, վոր հայրիկը շուտով կվերագառնա, ուրեմն կվերագառնա: Մայրիկը մեծ է, նա գիտե:

Մեկ անգամ զիշերը զուռն ուժեղ ծեծեցին: Մայրիկը անկողնից թռավ, արագ հագնվեց և դուռը բացեց: Ներս մտան — ամենից առաջ ոֆիցերը, իսկ նրա չեանից՝ զինվորները՝ հրացաններով: Զինվորներն սկսեցին ամեն ինչ տակն ու վրա անել: Նրանք աչքան բարձր ելին լսուսում և ծանր կոշիկներով ուժեղ թխկացնում, վոր Միշիկը քնից արթնացավ: Նա գլուխը հանեց վերմակի տակից և սկսեց զիտել, թե ինչ են անում զինվորները: Ոֆիցերը նկատեց գզրոցի վրա Միշիկի հոր լուսանկարը, վերցրեց և դուռը ժպտավ ասաց.

— Ա, հերոսն է:


Մայրիկը խնդրեց նրան:

— Թողեք լուսանկարը, ձեր ինչին է պետք այդ:

— Իսկ ձեր ինչին է պետք այս անպետք նկարը, հեզնանքով պատասխանեց ոֆիցերը:

Այդ վերավորանքից մայրիկի շրթունքները դողացին.
աչքերն արտասուքով լցվեցին:

Միշիկը տեսավ, վոր սաար, կոպիտ հորեղբայրը վի-
րավորում է մորը, իսկուհն անկողնից թռավ, մոտեցավ



մորը և սեղմելով փոքրիկ բուռնցքները, գոռաց ոֆիցե-
րին:

— Չհամարձակվես մայրիկին նեղացնել:

Ոֆիցերը ծիծաղեց և մոտեցավ, զարկեց Միշիկի բը-
թին:

— Այ դու, փախքոտ:

Միշիկը վերավորանքից և ցավից լացեց, թիկացրեց
վոտքը և գոռաց.

— Անպիտան, հեռացի՛ր այստեղից:

Յերբ զինվորները գնացին, մայրը գրկեց Միշիկին,
սեղմեց կրծքին և չերկար լաց լեզավ:

Միշիկն սկսեց մխիթարել մորը:

Մի լար, մայրիկ, հայրիկը կգա, մենք նրան բոլորը
կպատմենք:

Մեկ անգամ մայրն ուր-վոր գնացել էր: Վերադար-
ձավ ուրախ, բարձրացրեց Միշիկին և սկսեց համբուրել:

— Միշիկ, Միշիկ, մեր հայրիկը կենդանի չէ: Յես
հենց նոր իմացա այդ մասին:

— Իսկ վերսեղ ե հայրիկը:

Մայրը կոացավ և կամաց Միշիկի ականջին ասաց.

— Բայլ շեկիկների հետ գնացել է:

Միշիկը մտախոհ գլխով արավ:

— Իսկ նա կգա:

— Կգա, Միշիկս, անպայման կգա, միայն լսի՛ր, խե-
լոք լեզի՛ր, վոչ վոքի չասես:

Միշիկը լուռ գլխով արավ: Իհարկե, նա կլուի, չեթե
մասներն ել կտրեն, նա վոչ վոքի չի ասի, թե հայրիկը
բայլ շեկիկների հետ գնացել է:

Քանի գնում՝ նրանք ավելի զվարությամբ ելին
ապրում: Մայրը Միշիկի համար ել կաթ չեր գնում: Մեկ
անգամ Միշիկը շատ եր ուզում կաթ խմել:

— Մայրիկ, ինչո՞ւ վերջերս մենք միայն թեյ ենք
խմում. ինչո՞ւ ել կաթ չենք գնում: Յես կաթ եմ ուզում:

Մայրը տխուր պատասխանեց.

— Փող չկա, Միշիկ ջան:

— Իսկ ինչո՞ւ փող չկա:

— Մենք լերկուսով չենք աշխատում: Այ աշխատանք գտնեմ՝ փող ել կունենանք:

— Այն ժամանակ կաթ կգնես, չե՞:

— Կգնեմ, անպայման կգնեմ, բայրիկս:

— Դե, շուտով աշխատանք գտիր:

Մեկ որ մայրն ամբողջ որ սուն չեկավ. միայն լերեկոյան վերադարձավ: Նա շատ ուրախ եր:

— Միշիկ, լես արդեն աշխատանք եմ գտել: Այժմ դու կաթ ել կունենաս:

— Մայրիկ, վերտեղ աշխատանք գտար:

— Կոոպերատիվում:

Այդ որվանից մայրն ամեն առավոտ գնում եր աշխատանքի և գոհ վերադառնում սուն:

Միշիկի համար մայրն ամեն որ կաթ եր գնում:

Բայց մեկ որ մայրը վերադարձավ շատ տխուր և հաշորդ որը վոչ մի տեղ չգնաց:

Միշիկը զարմացած հարցրեց.

— Մայրիկ, ինչո՞ւ կոոպերատիվ չես գնում:

— Հենց այնպես, բայրիկս:

— Գլուխդ ցավո՞ւմ ե՞:

— Վոչ, Միշիկ ջան, չի ցավում:

Միշիկը տեսավ, թե ինչպես մոր աչքերն արտասուքով լցվեցին, և մայրը շուտ լեկավ, վորպեզի Միշիկը չնկատի, վոր նա լաց ե լինում:

Միշիկը բարձրացավ մոր ծնկներին, փաթաթվեց նրա պարանոցին և սկսեց համբուրել:

— Մայրիկ, ասա, ինչո՞ւ յես լաց լինում: Ո՞վ ե քեզ վիրավորել:

Մայրը պատմեց, վոր նա այլևս կոոպերատիվ չի

գնալու, վորովհետև իշխանության հրամանով նրանց, ում հայրիկը բայրիկ ե, աշխատանք չի տրվելու:

— Իսկ ո՞վ ե այդ իշխանությունը, մայրիկ:

— Կուլչակը, — ասաց մայրը:

Միշիկը մռայլ ունքերը կիտեց ու մտածեց:

— Դե, սպասեցեք, կմեծանամ, բոլոր կուլչակների վրեզ կկտրեմ:

Այդ որվանից մայրն ու Միշիկը հաճախ քրքրում ե-ջին գգրոցը և կանաչ արկղը: Մայրը իրերից տանում եր շուկա: Իսկ շուկայից վերադառնալիս Միշիկի համար կաթ եր բերում:

Մեկ անգամ Միշիկին ասավ.

— Միշիկ, լեկ ամեն ինչ ծախենք և այստեղից գընանք:

— Իսկ ո՞ւր գնանք, մայրիկ:

— Ուրիշ բաղաբ: Այնտեղ դուցե հայրիկից տեղեկություն իմանանք:

Միշիկն ուրախացավ:

— Հա, մայրիկ, գնանք:

Մայրը մի ամբողջ կապոց իր տարավ շուկա ծախելու: Իսկ լերեկոյան կառքով գնացին դեպի նավահանգիստ:

||

Միշիկը վազվզում եր տախտակամածի վրա. դիտում եր ամեն անկյունը, իջնում եր ներքևի տախտակամածը: Նավը լերկաթե սուր թիով ձեղքում եր ջուրը, և ալիքները կոհակներով ուժեղ խփում ելին նավի պատերին:

Նավի ներքևի մասում, լերկաթե ցանցով շրջապատված եր փոսը, վորտեղ արագ պտտվում եր մի մեծ ա-նիվ: Միշիկը վախենում եր մոտենալ, նա միայն հեռվից

ցանցի արանքով եր նայում ներքև: Սև մորուքով մի ան-
ծանոթ մեծ հորեղբայր՝ բարի դեմքով՝ յեկավ կանգնեց
Միշիկի կողքին:

— Հը, պատիկ, վախենում ես:

— Այո, — ասավ Միշիկը:

Հորեղբայրը բռնեց Միշիկի ձեռքը և միասին մոտե-
ցան ցանցին: Փոսի ներքևի մասում, աղմկող անիվի մոտ,
փալասը ձեռքին, ման եր դալիս մի մարդ, կարծես վա-
ռարան մաքրող լինի:

— Վառարան մաքրող ե, — ասավ Միշիկը:

Անծանոթ հորեղբայրը ծիծաղեց:

— Վոչ, մեքենավար ե: Այդ մարդն ե զեկավարում
մեքենան և առաջ շարժում մեր նավը:

— Իմ հայրիկն ել մեքենավար եր:

— Իսկ վճարեղ ե հայրիկդ:

Միշիկը նայեց հորեղբորը, հիշեց, վոր մայրն արգե-
լել եր ասել, թե վորտեղ ե հայրիկը:

Հորեղբայրը բարի հայացքով նայում եր Միշիկին,
ժպտում և շոյում նրա գլուխը:

— Բարի հորեղբայր ե, — մտածեց Միշիկը և վստահ
ասավ: — Բայլ շեղիկների հետ գնացել ե: Իսկ մեզ մոտ
գիշերը զինվորներ ելին յեկել, նրանք՝ գողում ելին մայ-
րիկի վրա: Մայրիկս միշտ լաց եր լինում:

Հիմա մենք ուրիշ քաղաք ենք գնում:

— Իսկ անունդ ինչ ե:

— Միշիկ:

— Իսկ հայրիկիդ անունը:

— Դմիտրի Կիսելով:

Անծանոթ հորեղբայրը կրկին շոյեց Միշիկի գլուխը և
ասավ:

— Դե, Միշիկ, վաղիբ մայրիկիդ մոտ: Վճարեղ ե
մայրիկդ:

— Վերևում ե:

Միշիկը վազելով գնաց վերևի տախտակամածը:

Շատ չանցած անտեղ բարձրացավ նաև բարձրահասակ
մորուսով հորեղբայրը: Դանդաղ քայլերով պտտեց տախտա-
կամածը, նավի յետևի մասում նկատեց Միշիկին՝ մոր կող-
քին կանգնած և կանգնեց նրանցից վոչ հեռու: Միշիկը
խսկույն մոտեցավ նրան և սկսեց նայել ցած, վորտեղ նրա-
տած ելին գլուղացիները:

— Ո՛ւր են գնում, — հարցրեց նա հորեղբորը:

— Քաղաք, աշխատանք փնտրելու:

— Ինչո՞ւ:

— Ուտել են ուզում: Նրանք փող կաշխատեն և հաց
կգնեն:

— Իսկ նրանք տանը հաց չունեն:

— Յերևի չունեն:

Միշիկը ինչ վոր բանի մասին սկսեց մտածել:

— Այո ե քո մայրը, — հարցրեց բարձրահասակ հո-
րեղբայրը:

— Ըհը:

Հորեղբայրը նստեց Միշիկի մոր կողքին և ասավ:

— Հետաքրքրվող տղա յե, ամեն ինչ ուզում ե իմա-
նալ:

Մայրը լուռ ժպտաց:

— Հեռու յեք գնում:

Մայրն ասավ քաղաքի անունը, ուր գնում ելին Մի-
շիկի հետ:

— Այնտեղ բարեկամ ունե՞ք:

— Վոչ, — տխուր պատասխանեց մայրը:

— Իսկ ո՞ւմ մատ եք գնում:

— Զգիտեմ:

— Յեթե ուզում եք, յես ձեզ ցույց կտամ իմ ծանոթ պառավ կնոջ հասցեն, նա ձեզ կընդունի:

Միշիկի մայրն անխտոհորեն նայեց անծանոթ մարդուն: Այն ժամանակ նա ավելի մոտեցավ Միշիկի մորը և ցած ձայնով ասավ.

— Հանգիստ լսեք ինձ: Յույց տվեք, վոր իբր թե խոսում ենք մանր-մունր խնդիրների մասին:

Յես ձեր ամուսնու ընկերն եմ:

Միշիկը նկատեց, թե ինչպես մայրը դեղնեց, մեջքով հենվեց նավի պատին, հետո շատ կամաց հարցրեց.

— Վճրտեղ ե նա, կենդանի՞ յե:

— Կենդանի յե: Գնաց բոլորի հետ միասին:

— Դուք այդ լավ գիտեք:

— Մենք նրա հետ միասին նահանջում ելինք սպիտակներից: Նա նավ նստեց, իսկ յես չհասցրի: Իսկ այժմ ահա թաղնվում եմ այստեղ:

Միշիկի մայրը կրկին նայեց հորեղբորը:

— Ինձ Միշիկն ասավ իր և հոր անունը:

Մայրը ամուր գրկեց Միշիկին: Ուրախությունից նրա լերեսը փայլում էր:

Հորեղբայրը գրպանից հանեց զբքույկը, պոկեց մի թերթ, ինչ վոր բան գրեց և տվեց մորը:

— Ահա իմ ծանոթ կնոջ հասցեն: Ուղիղ նրա մոտ կգնաք: Այնտեղ լավ կլինի:

Հորեղբայրը տեղից վեր կացավ, շուքեց Միշիկի գլուխը և իջավ ներքևի տախտակամածը:

Միշիկն ել հորեղբորը շտեսավ:

III

Միշիկն ու մայրը ապրում ելին Աննա տատիկի մոտ: Հաճախ յերեկոները, յերբ Միշիկը գիր էր կարդում կամ

խաղում, տատիկն ու մայրիկը կամաց խոսում ելին հարիկի մասին: Միշիկը ականջ էր դնում խոսակցություններին և իմացավ, վոր հեռվում կա Սորճրգային Ռուսաստան, վորտեղ միայն բալլերիկներ են ապրում: Այն-



տեղ ե ապրում նաև Միշիկի հայրիկը: Միշիկը իմացավ նաև այն, վոր այժմ Սիբիրից, վորտեղ ապրում են ինքը, մայրիկը և տատիկը, հայրիկի մոտ վոչ կարելի յե գնալ

և վոչ ել նամակ գրել: Ի խանութիւնը արգելում ե...
Մեկ անգամ Աննա տատիկը սուն յեկավ և հուզված
ասավ մայրիկին.

Մի ծանոթ մարդ ուզում է թաղուն Ռուսաստան
գնալ. պետք է նրա հետ նամակ գրել:

Մայրիկն ուրախացավ, իսկունն նստեց գրելու և Մի-
շիկին ասավ:

— Միշիկ, դու յել հայրիկին նամակ գրիր:

Միշիկը թողեց խաղալը, վերցրեց թուղթ և մատիտ
ու մեծ տպագիր տաներով գրեց.

«Բարե, թանգագին հայրիկ, լինչպես ես ապրում:
Յես և մայրիկն ապրում ենք Աննա տատիկի մոտ: Նա
ինձ շատ է սիրում և ինձ համար գրքեր և խաղալիքներ
է գնում: Տատիկի շնիկը սատկեց: Նրան ով-վոր հացի
հետ ասեղ եր սվել: Նա միայն մեկ որ ապրեց: Հայրիկ,
ինչու այսքան յերկար ժամանակ մեզ նամակ չես գրում:
Ինձ նամակ գրել: միայն առանձին, մայրիկին ել առան-
ձին: Հայրիկ, այս յես եմ գրել, ինձ վոչ վոք չի ասել:
Հայրիկ, մենք քեզնից նամակ ենք սպասում, — մայրիկը,
տատիկը և յես: Համբուրում ենք քեզ և սպասում, շու-
տով արի:

Քո Միշիկ:

Յերկու որից հետո նրանց մոտ յեկավ սև մուշտա-
կով, մեծ գլխարկով և թաղիքի կոշիկներով մի մարդ:
Վերցրեց մայրիկի և Միշիկի նամակները, շուցեց Միշիկի
գլուխը և գնաց:

Ի ուրախ սաստիկ սառնամանիք եր:

Չյան միջոցով համարձակ քայլում եր սև մուշտակով,
թաղիքե կոշիկով մարդը: Բարձրացավ բուք ու բորան:
Իրմացից ուժեղ փշում եր բքաշունչ քամին: Բայց մարդը

ղլխարկը բաշեց աչքերին և համառ քայլերով շարունակեց
ճանապարհը: Միթե նա կարող է վերադառնալ: Չե վոր
Միշիկի նամակը պահում եր կրծքի վրա և նա անպաշտան
պետք է Միշիկի հորը հասցնէր:

Այս, շատ զժվար է հակառակ քամու ուղղութչան
գնալ: Մարդը հոգնեց:

— Պետք է մի քիչ հանգստանալ, թե չե ուժասպառ
կլինեմ: Յերևի գլուղը մոտ է: Նա նայեց ձյան վրա: Մի
առժամանակ նայելուց հետո, քունն սկսեց տանել:

— Չե, — մտածում է նա — պետք է վեր կենալ, թե
չե եքնեմ և ել վեր չեմ կենա. կսառչեմ:

Ուզում եր բարձրանալ, բայց շատ հոգնած եր, վո-
րոշեց մի քիչ ել նստել. աչքերը փակեց, կուշ յեկավ,
վոր չմըսի: Բուքն ավելի ուժեղացավ: Կատաղի սուլոցով
պտտվում եր նա շուրջը: Իսկ մարդուն թվաց, վոր նվա-
զում են: Այդ նվազածութչան տակ նա քնեց:

Լուսաբացին բուքը հանդարտվեց: Փայլեց արեգակը:
Չյան փաթիլներից ցուլաց տափաստանը: Թմբի մոտ սա-
ռած պառկած եր մարդը: Նրա կրծքի վրա յեր Միշիկի
նամակը:

IV

Միշիկի հորը, ընկեր կիսելովին բայլեկները կա-
րևոր հանձնարարութչուն ելին տվել: Նա Կոլչակի Ֆրոն-
տի միջով պետք է անցներ Սիբիր, այնտեղ վորոներ մա-
ցած բայլեկներին, հանձներ նրանց կարևոր թղթեր, և
յես վերադառնար Ռուսաստան:

Միշիկի հայրը ուրախութչամբ համաձայնվեց և գոր-
ծը կկատարի ու կնոջն ու Միշիկին կտեսնի: Ճանապար-
հին նա մտածում եր ընտանիքի մասին:

— Խեղճ Նատաշա, սիրելի Միշիկ, յերևի շատ եք
կարոտել ինձ: Բայց վոչինչ, շուտուպ կտեսնվենք:

Մինչև կուչակի ֆրոնտը ընկեր կիսելովը չերեք որ
գնացքով գնաց: Միբիր հասնելու համար միայն մնում եր
անցնել ձյունով պատած այդ մեծ տափաստանը: Իսկ
այնտեղ, նա մի կերպ կնոջն ու Միշիկին կգտնի: Յեթե
նրանք հին տեղում ել ապրելիս չլինեն, ծանոթների մի-
ջոցով նա կիմանա, թե ուր են գնացել:

Նա մտածում եր, թե ինչպես պետք է հանդիպի Մի-
շիկին: Ուրախացավ և սկսեց արագ քայլել:

Հեռվում, թմբի մոտ, նկատեց մի սև կետ:

— Ի՞նչ է այդ, — մտածում է:

Չորս կողմը նայելով, նա կամաց մոտեցավ սև կե-
տին: Վոչ թռչուն է և վոչ մարդ, — վոչինչ չես ջոկի: Ելի
մոտեցավ, — մարդ է ձյան վրա նստած՝ սև մուշտակով և
թաղիքի կոշիկներով: Նայեց աչքերին՝ սառած է:

— Եհ, խեղճ մարդ, սառել է:

Կանգնեց մոտը, խորը հառաչեց և քայլեց առաջ:

Գնում է և մտածում:

— Գուցե նրան ել, ինձ պես, տղան է սպասում:

Հիմա ել չի տեսնի:

Հանկարծ կանգնեց:

— Յերևի մոտը հասցե կունենա, տեսնեմ. գուցե
կհանդիպեմ նրա բարեկամներին. կպատմեմ այս մասին:

Վերադարձավ սառած մարդու մոտ, սկսեց ծոցում
պտրտել: Մի քանի նամակ հանեց:

Սկսեց հասցեները կարդալ և հանկարծ զարմացած
աչքերն լայն բաց արեց: Նամակները դողացին:

Ի՞նչ է: Նամակը հասցեադրված է իրեն, կիսելովին:

Չեր հավատում, կարծում եր յերագումն է:

Աչքերը արտրեց, — վոչ, գրած է:

— Մասկվա, Դմիտրի կիսելովին:

Ճանաչեց կնոջ ձեռագիրը:

Արագ պատռեց ծրարը, հանեց լերկու թերթ թուղթ-
մեկը կնոջից եր, իսկ մյուսը՝ Միշիկից:

Ուրախությունից ձեռքերը դողում ելին, յերբ կար-
դում եր Միշիկի խզրգածը: Խնամքով պահեց նամակը
կրծքի վրա, մեկ անգամ ել խղճահարված նայեց սառած
մարդուն և ուրախ քայլեց առաջ:

Այժմ գիտեր, թե վորտեղ են կինը և լերեխան:

Մթնել եր արդեն: Հեռվում փայլատակեցին գլուզի
կրակները: Կիսելովը ծովեց ձախ, վորպեսզի գլուզից
հեռու անցնի: Հանկարծ փոքրիկ փոսից դուրս թռան լե-
րեք սավերներ:

— Կանգնիր, ո՞վ է:

Սառը քրտինքը պատեց ընկ. կիսելովին:

— Սպիտակներ են:

Ձինվորները շրջապատեցին նրան:

Կանգնիր, ո՞վ ես, ո՞ւր ես գնում:

— Չեզանից եմ, յեղբայրներ, բայց ինչնեղից եմ
փախել:

Ձինվորները ծիծաղեցին:

— Կարծում ես քեզ կհավատանք: Հեքյաթներ ես
պատմում:

Հետո խորհրդակցեցին միմյանց հետ:

— Պետք է մարդուն շտաբը տանել, այնտեղ կպար-
զեն— ո՞վ է, վորտեղից է: Տար նրան Մաքսիմով:

Գնացին— առաջից կիսելովը, լետից՝ պատրաստի
հրացանով՝ զինվորը:

Ճանապարհին կիսելովը մտածում եր փախուստի
մասին: Յեթե շտաբը տանեն, նրան կձեռքակալեն, դուցե
և գնդակահարեն:

Այն ժամանակ ել չի տեսնի վոչ կնոջը և վոչ ել Մի-
շիկին:

Փորձեց խոսել զինվորի հետ.

— Թող ինձ, չեղբայր, գնամ տուն:

— Քայլիր առաջ — ասավ զինվորը:

Մոտենում ելին գյուղին: Գյուղի մոտ գետակի վրա
զցած եր մի փոքրիկ նեղ կամուրջ:

Կամուրջի կիսին կիսիլլովը հանկարծ շուռ լեկավ
և այնքան ուժեղ հրեց զինվորին, վոր նա կամուրջից
ցած գլորվեց: Մինչև զինվորը թավալվում եր խորը ձյան
մեջ, կիսիլլովն անցավ կամուրջը, հասավ կայրը և թագ-
նըվեց ետտի ղեզի մեջ:

Լսեց հրացանի կրակոց, հետո վազող մարդկանց ձայ-
ներ: Յերբ ամեն ինչ հանդարտվեց, կուչ լեկավ խոտի
մեջ, տաքացավ և քնեց:

Ամբողջ ուր քնեց խոտի մեջ: Յերբ մթնեց, դուրս
լեկավ ղեզի միջից և գյուղից հեռացավ:

Ամբողջ գիշերը քայլում եր: Առավոտյան հասավ կա-
չարան. սպասեց զհացքին, սոմս գնեց և յերկու որից հե-
տո հաջող հասավ այն քաղաքը, վորտեղ ապրում եյին
կինը և յերեխան:

V

Քաղաքում կիսիլլովը գտավ իր ծանոթ Լոմովին: Լո-
մովը համակրում եր բալլեկիկներին: Նույն օրն և եթ կի-
սիլլովը գտավ նաև այն տունը, վորտեղ ապրում եյին
Միշիկն ու մայրը: Փողոցի մյուս կողմով նա մի քանի
անգամ անցավ տան մոտով և միշտ նայում եր պատու-
հանին, մի գուցե տեսնի կնոջը կամ Միշիկին: Գոնե հեռ-
վից տեսներ նրանց:

Շատ եր ուզում տուն մտնել: Ախ, ինչքան կուրա-

խանային նրանք: Վոչ, վոչ, չի կարելի տուն մտնել,
պետք է սպասել: Գուցե տանը ոտար մարդիկ լինեն: Իոկ
Միշիկը — փոքր է, չի հասկանում, կասի, վոր հայրիկը
լեկել է:



11-2625394

Տանը յերկար նայելուց հետո կիսիլլովը խորը հառա-
չելով հեռացավ...

Շատ միջանի անգամ ել անցավ տան մոտից: Մեկ



անգամ նրան թվաց, թե պատուհանից տեսավ Միշիկին: Մտածում էր, թե ինչպես հայտնի կնոջը, վոր ինքը այստեղ է: Նամակ գրի—լավ չե, գուցե փոստում նամակը բռնվի: Վնչ, նամակ չի կարելի գրել:

Վերջապես վորոշեց խնդրել ընկեր Լոմովին. վորպեսզի հայտնի նրա կնոջը, վոր ինքը, Կիսելյովը այստեղ է:

Լոմովը խոստացավ նրա խնդիրը կատարել: Նույն ուրը յերեկոյան, նա գնաց Կիսելյովի կնոջ մոտ: Նատաշան սկզբում վախեցավ:

— Ի՞նչ եք ուզում:

Լոմովը հայտնեց, վոր ուզում է մի կարևոր գործի մասին խոսել, բայց առանձին և ցույց տալով Միշիկին ասավ.

— Գուցե մի փոքր կանցնենք:

Նատաշան հասկացավ, վոր Միշիկի ներկայութեամբ չի կարելի ասել, հագնվեց և դուրս յեկավ:

Լուռ գնում ելին միասին: Հուզմունքից նա ամբողջ մարմնով դողում էր:

— Ձեզ հետ ուզում է տեսնվել մի մարդ. նա Ձեզ գիտե, — ասավ Լոմովը:

Նատաշան սարակուսանքով կանգ առավ:

Կարելի չէ հավատալ այս մարդուն, վորին առաջին անգամն է տեսնում:

Ո՞ւր է տանում նրան: Արդյոք թակարդ չի: Վերջապես, վորոշեց: Գուցե ամուսնու մասին բան կիմանա:

— Լավ, գնանք:

Յերբ յեկան Լոմովի մոտ, նա բացեց Կիսելյովի սենյակի դուռը և ասավ.

— Յհա այստեղ, մտեք:

Նատաշան ներս մտավ սրտի արագ բաբախումով: «Դիմացից բարձրացավ մի մարդ և մեկնեց ձեռքը»:

— Նատաշա:

— Միտյա, Միտյա:

Նատաշան ընկավ ամուսնու կրծքին, — և լաց է լինում և ծիծաղում:

— Միտյա, Միտյա, սիրելիս:

Կիսելյովը կնոջը նստեցրեց բազմոցին և սկսեց շույն նրա մազերը:

— Նատաշա, սիրելիս, տանջվել ես... Դե, պատմիր, ի՞նչպես ելիք առանց ինձ ապրում: Ի՞նչպես է Միշիկը...

Նատաշան սկսեց պատմել...

Կնոջ հետ վորոշեցին, վոր նա Միշիկը հետ գնա կիսնո, ալդտեղ կգա և Կիսելյովը, հեռվից կնայի տղային:

Յերբ Նատաշան վերադարձավ տուն, Միշիկն արդեն քնած էր:

Առավոտյան Միշիկը հիշեց ցերեկվա հորեղբորը և հարցրեց.

— Մայրիկ, ի՞նչ ասավ քեզ հորեղբայրը:

Մայրը ժպտաց:

— Հորեղբայր ասավ, վոր յերեկոյան մենք միասին գնանք կինո՝ նկարներ դիտելու:

Միշիկը կասկածանքով նայեց մորը:

— Ճշմարիտ, մայրիկ:

— Այո, այո:

Յերեկոյան գնացին կինո: Յերբ մոտենում ելին դրամարկղին՝ տոմսեր գնելու՝ Կիսելյովը գնում էր կնոջ և տղայի յետևից. տոմս գնեց, նրանց հետ մտավ դահլիճը և նստեց մի բանի քայլ հեռու: Միշիկը բարձր խոսում էր, վանկերով բարձրաձայն կարգում էր եկրանի վրայի գրե-

ըրև չէր կասկածում, վոր յերեք քայլի վրա նստած է նրա հայրը:

Կիսելլոյն անընդհատ նայում էր Միշիկին: Նա շատ էր ուզում մտաբերել տղային, գրկել և փաղաքշել:

Բայց չէր կարելի այդ անել:

Յերբեմն մայրը հագցնում էր Միշիկին և միասին գրնում ելին ման գալու: Բայց գնում ելին միայն այն փողոցը, վորտեղ ապրում էր Կիսելլոյը: Միշիկը չէր հասկանում, թե ինչու մայրը վերջերս այդ փողոցում է միայն ման գալիս: Նա սիրում էր ման գալ կենտրոնական փողոցում և խանութների պատուհաններից դիտել նկարները:

— Մայրիկ, ինչո՞ւ լինք մենք այս կողմը գալիս: Այստեղ լավ չէ:

— Միևնուէն չէ, Միշիկ, թե վորտեղ ման գանք:

Ուղիղ այն տան դիմաց, վորտեղ ապրում էր Կիսելլոյը, կար նստարան: Մայրը հաճախ կանգ էր առնում նստարանի մոտ և նայում, ասելով, վոր հոգնել է:

Յերբ նրանք նստում ելին նստարանին, Կիսելլոյը մտաբերում էր պատուհանին և յերկար նայում էր կնոջը և Միշիկին: Իսկ յերբ տուն ելին գնում, Կիսելլոյը գուրս էր գալիս տանից և փողոցի մյուս կողմով գնում նրանց յետիցը: Լսում էր, թե ինչպէս Միշիկը բարձր կարգում է ցուցանակների վրայի գրերը: Նատաշան ուզում էր, վոր հայրը տեսնի տղայի գեմքը. կանգ էր առնում և ցուցց տալիս փողոցի մյուս կողմն ու ասում.

— Միշիկ, դու չէս կարող կարդալ, թե ինչ է գրված այն ցուցանակի վրա:

— Կարող եմ:

Միշիկը շուտ էր գալիս և սկսում էր կարդալ:

Այդ դրութեամբ Կիսելլոյը կարողանում էր շատ լավ տեսնել Միշիկի գեմքը:

Մեկ անգամ մայրը Միշիկին ավեց մի նամակ:

— Միշիկ, հայրիկն է քեզ ուղարկել:

Միշիկը վազեց դեպի մայրը:

— Վճրտեղ ե: Տուր ինձ օւտտոյ:

Մայրը տալիս է նամակը: Թերթի վրա տպագրւած մեծ աստերով գրած էր:

«Իմ թանգագին, սիրելի Միշիկ: Գրում եմ քեզ առանձին նամակ: Ստացել եմ քո նամակը և դրա համար քեզ համբուրում եմ: Յես վողջ և առողջ եմ, միայն քեզ շատ եմ կարոտել: Շուտով յես կգամ ձեզ մոտ. միայն այդ մասին վոչ վոքի բան չասես, թե չես այն ժամանակ ել չեմ կարող գալ: Բարեկիր մայրիկին և Աննա առաիկին: Մայրիկին և առաիկին լսիր: Կրկին անգամ համբուրում եմ քեզ ու ժեզ, իմ սիրելի Միշիկ:

Քո հայրիկ»:

Յերեկը Միշիկը մի քանի անգամ կարգաց հոր նամակը: Յեվ ամբողջ ոբը ինչ վոր բանի մասին էր մտածում: Պարկելիս Միշիկը նամակը ավեց մորը և ասավ.

— Մայրիկ, նամակը մի լավ տեղ պահիր, վոր չգրանեն:

— Ո՞վ չգրանի:

— Չինվորները, յեթե նրանք գան:

Մայրը ժպտաց:

— Լավ, Միշիկ, յես կպահեմ:

Քնելուց առաջ Միշիկը բարձրացրեց գլուխը և քնաթաթախ ասավ:

— Մայրիկ, յես վոչ վոքի չեմ ասի, վոր հայրիկից նամակ ենք ստացել:

— Այ լավ կանես, բալիկս, վոչ վոքի չասես: Քնիր, բալիկս, քնիր:

Ամբողջ գիշերը Միշիկը ուրախ լերագներ տեսավ:

Մեկ անգամ մայրն ասավ Միշիկին.

— Ման գալ չես ուզում, Միշիկ,

— Վոչ, չեմ ուզում:

— Իսկ կառքով ուզում ես ման գալ:

— Ուզում եմ, ուզում:

— Դե, պատրաստվիր շուտով:

Տանից դուրս լեկան, կառք վարձեցին և գնացին: Մի մեծ տան առաջ կառքը կանգ առավ և նրանք իջան:

— Ուր ենք գնում, մայրիկ:

— Հյուր, չես ուզում:

— Ուզում եմ:

Լուսովը բաց արավ գուռը: Ժպտաց, բռնեց Միշիկի ձեռքը և նրանց տարավ մյուս սենյակը. հետո բաց արավ մյուս սենյակի դուռը և ասավ.

— Համեցեք, լերիտասարդ:

Միշիկի ներս մտնելուն պես, բաձրանասակ, սափրոված լերեսով հորչեղբայրը վրա ընկավ և գլխեց Միշիկին ու ամուր սեղմելով կրծքին, սկսեց համբուրել նրան:

— Միշիկ, իմ սիրելի Միշիկ:

— Հայրիկ:

— Այո, քո հայրիկն եմ: Տես, լես քեզ խոստացել ելի գալ և լեկա:

Միշիկը ձեռքը քսեց հոր լերեսին:

— Ծախում ե: Իսկ ուր ե քո մորուսը:

Մինչև լերեկո նրանք մնացին հոր մոտ:

Իսկ լերը մայրը պատրաստվեց գնալու, Միշիկը լաց լեղավ:

— Առանց հայրիկի չեմ գնա:

— Միշիկ, լես չեմ կարող գալ, լես պետք ե վերադառնամ:

— Յես ել քեզ մոտ կգամ:



Հայրը ժպտաց:

— Այ կմեծանաս, այն ժամանակ մենք միշտ միասին կլինենք:

Միշիկը արտասուները սրբեց:

— Յես շուտով կմեծանամ և բայցեիկ կդառնամ:

ՀԱՐՑՆԵՐ

- 1) Յերբ ելին կատարվել այս պատմվածքի մեջ նկարագրված դեպքերը:
- 2) Ինչու Միշիկի հայրը սափրեց մորուսը:
- 3) Ո՞վ և ինչու համար ընկեր կիսելցովին ու դարկեցին Սիբիրը:
- 4) Ի՞նչ կանելին կիսելցովին, յեթե կոլչակի զինվորները նրան բռնեին:

ԶՐՈՒՅՑ ԿԱՐԴԱՑԱԾԻ ՄԱՍԻՆ

Այս դեպքը պատահել է քաղաքացիական կռիւներէ ժամանակ:


1919 թ. ցարական սպիտակ կոլչակին հաջողվեց Սիբիրում կազմակերպել մեծ բանակ: Այդ բանակի մեջ մտնում էին սպիտակ ոֆիցերները, Սիբիրի կուլակութունը, կազակների մի մասը և բռնի կերպով մոբիլիզացիայի յեթարկված գյուղացիները: Կոլչակին ոգնում էին անգլիական և ֆրանսիական կառավարութիւնները: Ամբողջ աշխարհի բուրժուազիան ճիգ եր թափում վոչնչացնելու խորհրդովին իշխանութիւնը, վորովհետև այդ ժամանակ բանվորա-գյուղացիական կարմիր բանակը դեռ թույլ եր, չխտ-սլոժակների ոգնութիւմը, Կոլչակին հաջողվեց գրավել Սիբիրը, Մերձվոլգյան շրջանը և Ուրալը: Կոլչակը հասավ մինչև Կազան: Թիկունքում Կոլչակի զինվորների յետևից վերադառնում էին կալվածատերերը և գործարանատերերը: Նրանք յեա էլին խլում իրենց նախկին հողերը և գործարանները, ծեծում ու թալանում էին բանվորներին և գյուղացիներին: Սիբիրի աշխատավորութիւնը գործով համոզվելով, թե ով է թշնամին և ով է

ազրեկամը, սկսեց իրար յետևից ապստամբութիւններ կազմակերպել Կոլչակի դեմ: Ապստամբութիւնները ղեկավարում էին կոմունիստ-բայլշիկները:

Դժվար է յնթադրել այն տանջանքները, վոր լենինթարկվում էին բռնված ապստամբները:

Բայց և այնպես վոչ մի տանջանք չեր կարող վախեցնել ապստամբներին, ինչպես Միշիկի հորը—ընկեր կիսելցովին: Կուսակցութեան հանձնարարութիւմը կիսելցովը վերադարձավ Սիբիր, վորտեղ նրան արդեն փնտրում էին Կոլչակի ժանդարմները: Իգուր չանցավ կիսելցովի և նրա ընկերների աշխատանքը: Ուրալի բանվորների և Սիբիրի գյուղացիների ապստամբութիւնները քանի գնում, այնքան ավելանում էին: Հենց Կոլչակի բանակի ներսում սկսվել եր արհանգստութիւն: Բռնի կերպով բանակ տարված գյուղացիները խռովութիւններ էլին առաջացնում: Կոլչակի բանակը քանի դնում, թուլանում եր: Վերջապես, 1919 թ. ապրիլ ամսից Կարմիր բանակը սկսեց իր հաղթական արշավը: Իսկ 1920 թ. հունվարին կրամսոյարսկում անձնատուր յեղան Կոլչակի մնացած զինվորները:

1920 թ. փետրվարի 7-ին Կոլչակը զերի բռնվեց: Հեղափոխական դատարանի վճռով նա զնդակահարվեց: Ուրալը և Սիբիրն ազատվեցին սպիտակներից:



Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.



ՀՀ Ազգային գրադարան

NL0935767

683

1931/р. 683

9762 25 407.

11
26253

П. ДОРОХОВ
СЫН БОЛЬШЕВИКА 
ГИЗ. ССРА 1931 ЭРИВАНЬ